

ՊԱՅՄԱՆՈՒԹՅԱՆ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 8 ՄԶԶ
Չ Գաւառաց 10 ՄԶԶ
Վեդաւաճայ Կ. Պոլսոյ 4 ՄԶԶ
Չ Գաւառաց 5 ՄԶԶ
Իւրաքանչիւր թերթի գին 60 փր.
Կանոնական տողը մէկ անգամի համար 3 զուրուշ, երկու անգամի համար 2 զուրուշ, աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կը լայնայ:



Լ Ր Ա Գ Ի Ր

ՔԱՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱԿԱՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ 10 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Ա. Զ. Դ.

Տարւոյս վերջին ամիսը լրացաւ Վրաց ըլլալով, լրագրոյս ներկայ տարեկանը դեռ չվճարող դաւառաւնակ Սրբոյ բաժանորդներէն կը խնդրենք որ անյապաղ վճարելու բարեհաճին:

ՔԱՆԱԿԱՆ ԳԵՂԱՐՈՒՄ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիճենա 17 դեկտ.

Ձրաց մեկնելով թէ Պիմարը իշխանը ժողովին մէջ ծագած անհամաձայնութեանց պատճառաւ հրաժարական տուաւ եւ, Պորսոյին մէջ արժէքները թեթեւ կերպիւ ինկան:

Փարիզ 17 դեկտ.

Նրեանից յանձնաժողովն որոշեց թէ կառավարութիւնը պէտք է խնդրէ ազգային ժողովէն, որ երկրորդ ժողովաւան մը հաստատելու օրինաց ծրագիրն յունվար ամիսը մէջ վիճարկութեան դրնէ:

Պէրլին 17 դեկտ.

Ազգային երեսփոխանաց՝ պաշտօնավարութեան միջոցին՝ բանտարկուելու վերաբերեալ օրինաց ծրագիրն վրաց կառավարութեանէն բացատրութիւն խնդրելու առաջարկութիւնը, զոր ժողովին ընդգիծմանը մասն ըրած էր, Պիմարը իշխանին ընդդիմութեան հակառակ ընդունուեցաւ:

Փարիզ 18 դեկտ.

Ազգային ժողովոյ մէջ՝ Տեքազ դուքսը 62 խզկատարական գաղղկացեաց աղերսազրին ընթերցման առթիւ ծանուց թէ կառավարութիւնն յիշատակէ մէջ հիւպատոսական իրաւասութեան վերաբերեալ նոր դաշնագրութիւնը գալ շարժու ժողովին հաւանութեանը պիտի ներկայացնէ: Դեկտեմբեր ամիսը ալ գալ շարժու պիտի բաժնուի երեսփոխանաց: Տեքազ դուքսը նաեւ Ազգային ժողովին երեք վաճառականաց խորհրդին դէմ տուած աղերսազրին վրաց խօսելով ըսաւ թէ այս դործն ալ կառավարութեան հոգածութեան առարկայ պիտի ըլլայ: Հետեւաբար յիշեալ աղերսազրներուն իր պաշտօնատունը յղուելն ընդունեց:

Պէրլին 18 դեկտ.

Պիմարը իշխանին երկէ հրաժարական տալով և կայսրն ալ ընդունելով չուզելով, երեսփոխանական ժողովն այսօր 711 դէմ 199 ձայնով վստահութեան քուէ տուաւ Պիմարը իշխանին համար:

Վիճենա 18 դեկտ.

Երեսփոխանական ժողովն հրաւիրեց կառավարութիւնը որ դործաւորաց խորհրդաւորներն սահմանէ, որպէս զի դործարանաց մէջ ուղիատող տղայքն ու կանայքը պաշտպանեն, և յիշեալ հաստատութեանց մէջ կրթութիւնը խնամեն՝ տեսնելով կարգելով անոնց վրաց:

Փարիզ 18 դեկտ.

Կառավարութիւնը Պիմարը իշխանին

վրաց հսկողութիւնը կը կրկնապատկէ: Կարծիք կայ թէ Նարոյն Գի որդին Փարիզ կը գտնուի և իր ներկայութեամբ կը նշատէ զինուորական դաւադրութեան մը:

Պէրլին 18 դեկտ.

Պիմարը իշխանին երեսփոխանական ժողովոյ մէջ կրած պարտութեան պատճառաւ հրաժարական տալու սպառնալիք ընելով ժողովը վստահութեան քուէ տուաւ անոր, և մերժեց կղերական երեսփոխանաց առաջարկութիւնը որք գաղանի ծախսըց յատկացեալ դուքսները ջնջել տալ կուզէին:

Կայսրը խորհրդակցութիւն մ'ըրաւ Պիմարը հետ, և այսօր ալ նախարարաց խորհուրդ մեղաւ կայսեր նախագահութեամբ:

Կայսրն այս իրիկուն ճաշ մը պիտի տայ, որուն հրաւիրեալ են Գաղղիոյ, Աւստրիոյ, Ռուսիոյ դեսպանները, և Պիմարը և պետութեան նախարարները:

Պէրլին 19 դեկտ.

Արմի կոման երեք ամիս բանտարկութեան դատաւարութեան, արդէն մէկ ամիս բանտը կենալն ալ այս հաշուին մէջ առնուելով:

Պէրլին 19 դեկտ.

Երեսփոխանական տագնապին առաջին առնուեցաւ, և Պիմարը իր ախարհագրութեան վրաց կայսեր վրաստահութիւնն ապահովելով՝ կրնայ այսուհետեւ ժողովին մէջ մեծամասնութիւն ունենալու վստահիլ:

Այսօր դատական ասեանն Արմի կոման դործին վրայ վճիռ տուաւ ի ներկայութեան ամբաստանելոյն:

Վճառելով կը ճանչէ թէ հեռագրերն արգելելու դործին մէջ Արմի կոմանի զիտաւորութիւնն ըստ ինքեան անմեղ է, բայց պաշտօնական թուղթեր վերացուած ըլլալն ալ ստոյգ է: Այս պատճառաւ Արմի կոման երեք ամիս բանտարկութեան դատաւարութեան, յորմէ պիտի զեղուի արդէն կրած միամեայ նախարդէր բանտարկութիւնը:

Լոնտոն 19 դեկտ.

Ռոմ Գոն. 44 13/16
Փոխ 4865 68 1/2
» 4869 54 1/2—3/4
» 4874 63 1/2
» 1872 84 1/2—85
» 4873 54 7/8
Նոր փոխառութիւն 1 1/4
Անգլ Գոն. 92 1/8

Լիվերքուլ 19 դեկտ.

Բամպակ Միտլինկ—Օրլէան 7 3/4—
» Ֆայր Տոլէրան 4 7/8—5
Երախտ 12000 հակ:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Թրհաւայի կառավարիչ Աղիզ փաշան Կիլիկիոյ կառավարիչ անուանեցաւ:

Պատրիէթ լրագիրը կը ծանուցաւ թէ Պաշտօնի դաւառին հետ միացեալ Նէժմ նահանգին մէջ խռովութիւն ելեր է, և տեղւոյն ստա-

հակ արաբները տեղական իշխանութեան վրայ յարձակել են: Ասոր վրայ Միլիթէֆիզ կոչուած արաբաց նախկին չէյն Նասէր փաշան Նէժմ զրիւներ է խռովարարները զսպելու:

Պրուսայի խիւտալէնտիկեար լրագիրը կը ծանուցանէ թէ Ինէկէօլի նահանգին մէջ քանի մը դործաւորք արտի մը շուրջ փոս մը պեղած առնինին փորքիկ սափոր մը գտեր են, որոյ մէջ 580 հատ այլ և այլ մեծութեամբ արծաթ դրամներ կային ամենն ալ Սուլթան Մուսթաֆա Խանի օրով կտրուած: Յիշեալ դրամները Պրուսա տարուել են:

Անցեալ շաբթուան փոթորիկներուն ժամանակ, վեց չէքարմէ, չորս մալուխա և քանի մ'ալ ուրիշ նաւեր Բոսֆորի նեղոցին եղերքները ցամաքն ինկան:

Կըսուի թէ անցեալ չորեքշաբթի օրը զիտաւար Բէթիմ շոգեհաւին մէջ, Ֆոթիառէս պէյի և նորա բնտանեաց կարաւորներէն ու դոյրքերէն զատ Պ. Նէկրօօնիէի 4200 ոսկին կայ եղեր: Այս ստակը նաւին մէջէն դուռնուելով հանուել է:

Կ. Պոլսի փաշայի մը տունը ծառայող 15 տարեկան Չէրքէզ գերի մը անցեալ շաբթու քանի մը հազար լիրայի գոհարեղէն գոյնաւով փախու անյայտ եղաւ, և ոստիկանութեան բոլոր խուզարկութեանց հակառակ դեռ չլլցաւ գտնուիլ:

Ձինուորական նախարարութեան նորընտր տեղակալ (չպաշտօն) Արի Սայիպ փաշան ուրբաթ օրը Կ. Պոլս հասաւ Սէլանիկէն, և Վիւհ Սուլթանին ներկայանալէ ետեւ իւր պաշտօնը վարել սկսաւ:

Արիանուպոլսոյ երկաթուղւոյն քանի մը մասերը վերջին անձրեւներէն աւրուած ըլլալով, երեք չորս օր հազարակիցութեան շարունակութիւնը դադարեցաւ, բայց պէտք եղած նորոգութիւնները շուտով կատարուելով ամառս 65ն ի վեր նորէն երթեւեկութիւններն սկսան:

Վերջին փոթորիկներն ինչպէս Պաշտօնի նոյնպէս և Ատանայի դաւառին ծովեզերաց վրայ բազմաթիւ նաւաբեկութիւններ պատճառուած են: Բարեբաղդաբար մարդոց կորուստ չատ եղած չէ:

Յաւաքիկայ շաբաթ իրիկուն ի նպատ դադարեալ թատրոն լրագրոյ ներկայացում մը պիտի տրուի Նիկիի փաշայի Թոմանիէ թատրոնը:

ՊԱՅՄԱՆՈՒԹՅԱՆ

Կայսր պաշտօն լրագրոյ ճանաչողութիւն խնդրութեան վրայ:
Կայսրոյ լրագրոյ լրագրոյ ճանաչողութիւն խնդրութեան վրայ:
Կայսր Եւրոպէ գրութիւն խնդրութիւն
—Տնօրէնին պիտի ուղղուի, Կ. Պոլս, Չինիլի Խան, Մասիսի գրառնեցաւ:
Ճամբու ծախքը չվճարուած են:
Ճակ չընդունուիր:

ԿԱՍԱԿԱՆ ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԵՍՆԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՆԷ

9 դեկտ. երեքշաբթի իրիկուն 50 5
10 » երեքշաբթի ամառ 49 37
բացուեցաւ 49 33
կէ օր

Կ. Պոլս 9 դեկտ.

Սօսիէթէ լիւնէրայի բաժինը Անգլո-լիր. 8 14
« փոխանակութեան » 5.26
Կ. Պոլսոյ Պանքային » 6.42
Գրէտի Դէնէրայ » 11 16
Գրէտի Օսթրո-թիւրք
Երկաթուղեաց հիւ 30. 125 1/4
Փոխ. 4863 » 344
» 4865 » 349
» 4869 » 276 1/2
« 4872 » 85 1/2
» 4873 » 264
Թրամուէյ Օւմ. լիր 4 65

ԵՍՆԱՄԸ ԴԵԿՏԵՄԲԵՐ

9 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Անգլ. լիրա Գոլուշ 440.20
Նարոյն ոսկի » 88
Իմպէրիալ Ռուս » 89 20
Գրք-փոք » 54, 27
Հինգ ֆրանք » —
Հինգրոց » 104 25
Պրիմ » 128 20

Ա. Զ. Դ. Ս. Ն.

Ասկէ առաջ անգամ մ'ըստի ենք գարձեալ կը կրկնենք թէ՛ ստիկականութեան դրան քով ազգային դործակատար մ'ունենալու պէտք չատ զգալի եղած է: Յայտնի է թէ՛ աւերութեան միւս դռներէն աւերի՝ յիշեալ պաշտօնատան մէջ դործ ունեցողներ միշտ պակաս չեն գրքութեան ամեն կարգի ազգայնաց մէջ, ուստի պէտք է որ հոն մեր ազգին ներկայացուցիչն ունենանք, ինչպէս որ ունին ուրիշ հպատակ ազգեր, և կ'օգտիլեն ցարգ իրենց այս իրաւունքը: Սոյն պաշտօնը՝ կառավարութեան շնորհած այն կարեւոր արտօնութիւններէն միւն է, զոր ազգը չատ տարներէ ի վեր կը վայելէ, բայց կարծես թէ այժմ բարձրաձայն կամ անկարեւոր դատուելով թափուր թողուած է նախորդ և ներկայ վարչութեանց օրով: Հոն ազգային դործակատար մը չգտնուելուն պատճառաւ՝ ազգայնաց կրած նեղութիւններն ու վնասները մի առ մի մէջ բերել աւելորդ կը համարինք. իւրաքանչիւր

ուր կրնայ ինքնին՝ երևակայել. ուստի միայն կըսենք թէ՛ ազգային վարչութիւնը պարտի օր առաջ՝ արժանաւոր անձ մը կարգել այդ կարեւոր պաշտօնին, որպէս զի պզտի պարտքի մը կամ որչա՛հ չնչին պատճառի մը համար շարաթիւերով և մինչև իսկ ամիսներով երթիւ եկող և շատ անգամ ալ բանտի մէջ տառապող մեր անոր ու անտէրունչ ազգայինը գէթ իրենց միակ օգնութենէն ու մըթիւթարութենէն չզրկուին։ Չենք կարծեր որ ազգային վարչութիւնը արեւտագիտական դիտումներով չուզէ զայս նկատողութեան առնուլ, յիշեալ պաշտօնէին ամսականը կեդրոնական անուակին բեռ մը համարելով։

Ոչ միայն պէտք է այդ պաշտօնը Պատրիարքարանի ուրիշ նուազ կարեւոր պաշտօններէն նստադասել, այլ և յատուկ ամսական մ'որոշելով՝ կեդրոնական անուակին հաշուերը ռոյն մէջ անցունել, որպէս զի գոյութիւնն ազգային մէջ ալ ապահովի։

Կը լսենք թէ վարչութիւնը միտադիր է եղբւր մայրաքաղաքիս ազգային վարժարանաց ընդհանուր տեսողութիւնը կարգել 1500 դրշ ամսականաւ, որով 18000 դրշը գումար մ'աւելցած կըլլայ կեդրոնական անուակին տարեկան ծախսը վրայ, մինչդեռ այդ պաշտօնն անձնուրիշութեամբ և ձերբապէս կատարելու պատրաստ և կարող անձինք կրնան գտնուիլ ազգային մէջ, եթէ ֆաղաքական ժողովը զանոնք հրաւիրելով՝ առ ազգային ունեցած պարտականութիւնին յիշեցնէ, և խնդրէ որ ազգասիրաբար ծառայեն ազգին, մանաւանդ այսպիսի կարեւոր պաշտօնի մը մէջ՝ որ ոչ նուազ պատիւ կը բերէ զայն կատարողին։ Չենք կարծեր որ չաջողի ֆաղաքական ժողովը իւր այս ձեռնարկութեան մէջ։

Սա ալ պէտք է գիտնալ թէ՛ այդ տեսչական պաշտօնը կարող չէ մէկն առանձին և ըստ արժանւոյն կատարել, որովհետեւ մայրաքաղաքիս և անոր արուարձաններուն ընդարձակութեան պատճառաւ ազգային վարժարանները ցրուած են, և մէկ մէկէ բաւական հեռու կ'ըլլան։ Անոնց ամիսուն այցելութիւն տալ և պէտք եղածին չափ աչքէ անցունել մէկ հոգիի համար գոհաբերին է, քանքան անկարելի։

Ըստ մեզ՝ իւրեւ աւելի դժբանա՛ն և դժբերն միջոց՝ կը յանձնարարենք վարչութեան որ այս տեսչական պաշտօնը քանի մը ձեւերու կամ շրջանակներու բաժնէ, և իւրաքանչիւր շրջանակի մէջէն մէկ մէկ անձնուէր և հմուտ անձ ընտրելով անոնց յանձնէ մասնաւոր շրջանակներուն ազգային վարժարանաց տեսչութիւնը։

Իսկ տեսչի մը համար որոշուած ամսականը ըստ իրական դրան ազգային գործակատարին վճարուի, որ խիստ կարեւոր է ներկայ ժամանակիս համար, և առաջնայն պէս ձրի կատարուելիք պաշտօն չէ։

Մեր այս առդերը ֆաղ. ժողովը խորին ուշադրութեամբ կը յանձնենք։

ՕՐԱԴԻՐՈՅ ԽՈՍՏՈՒԱՆԻԹԻԻՆԸ

Չօյիւնան հարցունքն երկուշաբթի օրը դարձեալ կոնգակած և հայհոյալից յօգուածով մը՝ իբր հլու հրապարակ համարուն խմբակին, հրապարակ հանած կաշառակերութեան դատարիքին վրայ շատ մը խօսելէ և խորհրդակցելէ ետեւ, այս մասին պահած միամտայ լուծութիւնը կը խղէ

կարկառուն խոստովանութեամբ։ Այդ ամբողջի գաղտնիքը, այդ կատարուած իրողութիւնը, իբր նշանակութիւն չունեցող իր մը ցուցնելու ճգնելով հանգերձ, ինքնին իւր բերնով կարտասանէ կը վճռէ աշխարհի առջև խմբակին և իւր դատապարտութեան անհերքելի դատականիքը։ Առ այս իրաւունք ունի Չօյիւնան պատգամախօսը, զի այլ ևս լուծութիւն պահել հնարաւոր չէր մեր ըրած ստիպումներէն ետեւ։ Ծանր և հիմնաւոր ամբաստանութիւն մը, որ ներսէն դուրս ելած էր, և ոչ թէ դրսէն խմբակին վրայ կառկածով մը հիմնուած։ Ի՞նչ ընէր թշուառ պատգամախօսը. անգամ մը ըսած դրտնուէր է շատերու, և այն շատերն ալ ուրիշ շատերու ըսած էին, ալ ծածկելու խեղդելու ժամանակն անցած էր, թէ և կը ջանայ հիմա մեզ կերպով մը հասկնել թէ աւելի մեծ ու կարեւոր նշանակութիւն ունեցող գաղտնեաց դատաւարա՞ն է, և այս առթիւ իւր քով նուազ կարեւորութիւն ունեցող գէպքի մը մեծ նշանակութիւն տրուելուն կը դարձնայ։ Մաղթենք որ Չօյիւնան պատգամախօսն այդ մեծամեծ գաղտնեաց օր մը մեզ վերահասու ընելու հարկադրի, խմբակին մէջէն դարձեալ ուրիշի մը ներշնչուով։

Անժխտելի ճշմարտութիւն մ'է թէ՛ կարգէ դուրս շահաւորութիւնը շատ անգամ սերտ բարեկամութիւններ կը քակուէ, որ ինչպէսայն դատաւեաց յայտնուելուն մէջ իսկ տեսնուելու։

Պէտք է գիտնայ Չօյիւնան հարցունքը թէ՛ այսպիսի պարագայներու մէջ՝ մեծն ալ փոքրն ալ մի և նոյն կարեւորութիւնն ունին։ Մէկ ոսկին 100 սակից քով իր արժէքը չկորսնցնէր, թէ և քանակութեամբ փոքր է։ Պզտիկ դէպք մը՝ շատ անգամ մեծ դէպքերու առաջնորդ կըլլայ։ Գաւաթ մը ոգելից ըմպելի՛ն՝ վերջը մարդս կը գինովցնէ, չենք կարծեր որ Չօյիւնան պատգամախօսն իսկ իւր անձին վրայ փորձած չըլլայ զայս։

Ուստի ոյն կաշառակերութեան գաղտնիքը՝ ո՛րչափ ալ Չօյիւնան պատգամախօսը պզտիկ բան մը ցըցնելու կաշխատի, մեծ ու շատ մեծ է ազգային առջև, քանի որ խնդիրն ազգային է, և այդ ազգայնաց տեսչութեան ընտրելուն՝ ազգային պաշտօն է։

Հիմայ դառնանք Օրադիրը խոստովանութեան՝ զոր դրով և բանիւ ըրած է ազգին և մասնաւորաց առջև, ի մեծ դատապարտութիւն. իւր և համարձակ խմբակին։

«Մամբրէ կալիկոպոս Պօլիսէն մեկնելէն վերջը, օր մը անոր և մեր բարեկամներէն միս՝ 15 ոսկի խօսք մը բացառ մեզ թէ՛ փափագեան էֆէնտիի տրուած է (տես Օրադիր թիւ 1404)։»

«Դիտենք որ այդ բարեկամ ըստման՝ Մամբրէ կալիկոպոսին Պօլիս գործակատարն է (որուն տնունը տալ բաներնու չգար), օր մը դրտակներակն գալով խմաց տուաւ մեզ թէ՛ արդեօք ստացած էինք յիշեալ կալիկոպոսին բաշխած դրամէն՝ մեր բաժինը. որովհետեւ նա փափագեան էֆէնտիի բաշխման եղանակին վրայ կառկած ունեցեր էր (Չօյիւնան հարցունք)։»

«Մենք բաւական մտածելէնք թէ՛ այդպիսի փոքրիկ գումար մը ինչպէս ընդունելու կը զիջանի փափագեան էֆէնտի (գիտնալով որ յիշեալ կալիկոպոսին կրնար աւելի

մեծ կալ գումար մը առնուիլ) (տես Օրադիր թիւ 1404)։»

«Մենք բաւական չմտածելով՝ այսինքն անխոհեմութեամբ՝ անոր անոր ըսինք թէ՛ յանուն խմբակին փափագեան էֆ. ի յանձնուած գումարը ինքնին կու տուէր է, մեր բաժինն ալ մէկտեղ, այս պատճառաւ կառկածնիս աւելի զօրացաւ յիշեալ էֆ. ին վրայ, որ՝ եթէ խմացուելու հաւանականութեան ներքեւ գտնուող պարագայի մը մէջ այսպէս վարուած է, արդեօք ինչե՛ր ըրած չէ ուրիշ առիթներու մէջ (Չօյիւնան հարցունք)։»

«Փափագեան էֆ. ի պէս կարողութեան տէր մէկէ մը այս չէր յուսացուէր, (մեզնէ այդ կառկածն ընելու իրաւունք ունէին, բայց ոչ թէ անկէ) (տես Օրադիր թիւ 1404)։»

«Մակայն յանցանքը մերն է, փափագեան էֆ. ի համար կաշառակու է ըսած առնանիս, անոր նիւթակոն կարողութիւնը բնաւ հաշուոյ ներքեւ չգրինք, և իբրեւ կատարուած իրողութիւն պատմեցինք (Չօյիւնան հարցունք)։»

«Նոյն միջոցին Մամբրէ խմբակի Ս. յաղեան էֆէնտին տեսնա՞ք՝ ու ի մացածնիս պատմեցինք ՉՍԲՄԱՅՍՄԱՄ (տես Օրադիր թիւ 1404)։»

«Երանի թէ միայն Ս. յաղեան էֆէնտիի պատմած ըլլայինք. մեզ գէտ եղած այս անիրաւութեան վրայ բարկութիւննիս չկրնալով զըսել, մանաւանդ անիծեալ ոգելից ըմպելեաց ներշնչութեամբ, դէմերնիս ելողին՝ առանց ո՛վ ըլլալ աղէկ մը հասկնալու, պատմեցինք որ մեզ ցաւակցի. կարծես թէ մեր քով գտնուած այնչափ մեծ գաղտնիքներուն մէջէն՝ այս անիծեալ գաղտնիքը մեր մէջ մնալ չէր ուղեր։ Ի՛նչ ըսենք, մեր ոտքովը փոքր ինկանք, հիմայ կրնան նէ մէջէն ելիլ։ Չըսինք ըսենք՝ չըլլար, ըսինք ըսենք՝ ան ալ չըլլար, խոստովանելու էինք և խոստովանեցանք։ (Չօյիւնան հարցունք)։»

«Թէ և չէինք յուսար որ այսպիսի վատութիւն մը ընէր փափագեան էֆէնտի (տես Օրադիր թիւ 1404)։»

«Թէ և կաշառակեր է, տասնի վատութիւն տասնի անիրաւութիւն չըլլար, հրապարակաւ խօստաւակելու է, և այլ շատ մը խօսքեր ըսինք փափագեան էֆէնտիի ետեւէն, հիմայ այս ծանր ամբաստանութիւնները ինքնուր ծածկենք, տէ՛ր Աստուած, լեզուովնիս փորձանք հրաւիրելինք մեր վրայ, ալ ամենալու ժամանակն անցաւ, ինչ կուզեն թող ըսեն, երեսնիս կը պինդցնենք. առ առաջին անգամը չէ՛ եւ (Չօյիւնան հարցունք)։»

«Այսու հանգերձ մնաքերնիս դրինք գործը խոտեղել, և եթէ եթա՝ ըլլայ ըսածը՝ ամենէն առաջին պարտաւ մենք տանք (տես Օրադիր թիւ 1404)։»

«Մենք այս գործը աղէկ մը քննելէ, ստուգելէ և իրաւ ըլլալուն ալ կատարելագոյն համոզուելէ ետեւ՝ այնպէս երեւան հանեցինք. ապա թէ ոչ՝ խնդ. կամ զրպարտիչ ըլլալու էինք՝ խօսքերնուս ետեւ առջևը չնայելու համար՝ ինչո՞ւ ուրիշ մեզքն առնենք. փափագեան էֆէնտիի համար ո՞վ մեզ բան հարցուց. դարձեալ պէտք է խոստովանելինք որ յանցանքը մերն է. ոչ, այն նշողեալ մամնայինն է (Չօյիւնան հարցունք)։»

«Որովհետեւ ամենին չէինք կրնար ընդունիլ որ մեր մէջ այդպիսի մէկը (կաշառակեր) գտնուի։» (տես Օրադիր թիւ 1404)։

«Մեր մէջ այդպիսի մէկը չգտնուիլն ալ չէինք կրնար ընդունիլ, անոր համար կատարուելու հաւատքի փոխուեցաւ, հետեւաբար որու որ հանդիպեցանք, ահա քեզի նոր գաղտնիք մը ըսելով փափագեան էֆէնտին պարտաւեցինք, ուխտելով որ այդ ազատութեան մէջ թաւալող խմբակը ուրիշ անգամ չմանենք (Չօյիւնան հարցունք)։»

«Ասոր վրայ ոչ ոք չէր ըստուգելինք որ՝ իրաւ գեր. Մամբրէ սրբազան 15 ոսկի տուէր է ի ներկայութեան փափագեանի՝ Բէ Խաչի անշնչ (տես Օրադիր թիւ 1404)։»

«Մամբրէ սրբազանին կողմէ մեզ աւեալիս բերող գործակատարն արդէն խմացուցած էր թէ՛ յիշեալ գումարը ոչ թէ այցոյ տուած էր ինքեւկայութեան փափագեան էֆ. ի, այլ նոյն իսկ փափագեան էֆ. ի տուած էր, մեր բաժինն ալ մէկտեղ, մէկ քանի ծանուցեալ անձանց բաշխուելու պայմանաւ և հրահանգով։ Բայց ի՛նչ օգուտ, սեւ ներս, ճերմակը դուրս, խնդրը կարելի եղածին չափ պաշտպանողական դիրքով մը հրապարակ հանել պարտաւոր ենք, ինչու որ առջի անհամաձայնութիւնը վերջէն համաձայնութեան փոխուեցաւ. . . . (Չօյիւնան հարցունք)։»

Օրադիր իւր այս ամբողջ խոստովանութիւնները թէ բերնով և թէ դրաւոր հրատարակութեամբ կատարելէ ետեւ, ձախող հարցում մ'ալ կուղղէ Մասիսի, առարկելով թէ՛ ինչո՞ւ համար Մասիս փափագեան էֆէնտիի գէտ՝ ստորագրեալ ամբաստանագիր մը չներկայացնէր ազգային ժողովին, և զայն ի դատ չկոչեր՝ իբրեւ կաշառակեր։ Այսպիսի ծիծաղաշարժ և միանգամայն հաւատարմութեան հարցման մը պատասխանելու չէինք զիջանք, որ Օրադիր ինքզինքն իբր փառատարան ծախել կուզէ, մանաւանդ ամբաստան խնդրոց մէջ, և չունեցածն ունեցածի պէս երեւցնել կը ճգնի, ուստի անոր փառատարանական վիճակին ալ դեռ ինչ ատրիճանի մէջ գտնուիլն աչքին առջև դնենք՝ որ քիչ մը ամենայն։

Այստեղ գիտէ թէ բարոյապէս կամ նիւթագոյն ֆլաուսող անձն է որ զիջատուն ի դատ կը հրաւիրէ, գտնուած երկրին տիրող օրինաց համաձայն արդար հատուցում մը կամ փոխարինութիւն մը ստանալու պատճառաւ. այսու անժխտելի սկզբամբ՝ Մասիս իւր կողմէ դատ բանալու բնաւ պատճառ չունի, քանի որ ֆլաուսող չէ, մինչդեռ փափագեան էֆ. ի գէտ Օրադիր ամբաստանութիւններ ընելով զայն ֆլաուսած է, իսկ Մասիս հրապարակային արձագանք մ'եղած է անոր (Օրադիր) ամբաստանութեանց։

Արդ, ըստ որումայն ինչդրոյն մէջ ուղղակի և բարոյապէս ֆլաուսողը փափագեան էֆ. է՝ Օրադիրը յայտնած ու տարածած կաշառակերութեան գաղտնիքէն, հետեւաբար փափագեան էֆ. ի իբր ֆլաուսեալ պարտաւոր է ՕՐԱԴԻՐ ԳԼՄ պատուոյ դատ բանալ և հատուցում պահանջել, որ եթէ չկրնայ ապացուցանել, իբր զրպարտիչ խոստաւակուի ազգային առջև՝ արժան եղած դատապարտութեան վճիռն ընդունելով։ Ահա՛ այս է դատ բանալու օրինական եղանակը այն խնդրոյն մէջ։

Բայց խնդրին ուրիշ կերպով մ'ալ կրնայ փառատարանուիլ՝ դարձեալ օրինաց համաձայն։ Ըստ որում Օ-

* Օրադիր ամենայն. — խեղճ գէտ բան։

Լիազոր գործակառույթ
Վ. Ռ. ՍՈՒՆԵ